ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶՈՒՄ

Սըրտիս խորքերեն,
Հովեն թե ծովեն
Մի ձեն եմ լըսում.–
Ո՛նց է մի աղջիկ
Մեղմ ու հանդարտիկ
Անվերջ արտասվում։

Կոպիտ աշխարհ է,
Մարդը միշտ չար է,
Կյանք է կործանում,
Կյանքն էլ կործանված
Որ անցավ գնաց,
Էլ ետ չի դառնում...

Սըրտիս խորքերեն,
Հովեն թե ծովեն
Մի ձեն եմ լըսում.–
Ո՛նց է մի աղջիկ
Մեղմ ու հանդարտիկ
Անվերջ արտասվում։

«Թամա՛ր... Ա՛խ, Թամա՛ր...»
Իզո՛ւր... ոչ մի բառ...
Չի պատասխանում։
Սերը որ կորավ,
Սիրտը որ մեռավ,
Արցունքն է մնում...

Սըրտիս խորքերեն,
Հովեն թե ծովեն

Մի ձեն եմ լսում.–
Ոնց է մի աղջիկ
Մեղմ ու հանդարտիկ
Անվերջ արտասվում...